

**Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ**

**2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱՆՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵՎ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն ընթացակարգով սահմանվում են 2023-2026 թվականների ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) պրոֆեսորադասախոսական կազմի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս, այսուհետ միասին՝ դասախոս) գործունեության գնահատման, ատեստավորման կարգն ու պայմանները, ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգը:

2. Սույն ընթացակարգի մշակման իրավական հիմքերն են՝ ԵՊՀ կանոնադրությունը, ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգը, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագրի իրականացման կարգը և ԵՊՀ 2021-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը:

3. Դասախոսի ատեստավորումը կամավոր գործընթաց է, որը հավասարապես կիրառելի է վերապատրաստում անցած կամ չանցած դասախոսի դեպքում:

**2. ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ**

4. Դասախոսի գործունեության գնահատումն ու ատեստավորումն իրականացնում է ատեստավորման հանձնաժողովը:

Ատեստավորման հանձնաժողովի անվանական կազմը հաստատվում է ռեկտորի հրամանով՝ ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագրի իրականացման կարգով սահմանված սկզբունքների հիման վրա:

Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին:

Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

5. Հանձնաժողովի նիստերը գումարվում են ատեստավորման դիմումների առկայության դեպքում, բայց ոչ պակաս քան տարեկան երկու անգամ:

6. Վերապատրաստում անցած դասախոսի դեպքում, դիմումատուն հանձնաժողովին ներկայացվում է իր վերապատրաստման արդյունքները հաստատող փաստաթղթերը, վերապատրաստման արդյունքում ստացված գիտելիքի և հմտությունների կիրառությունը հաստատող փաստաթղթերը՝ ըստ սույն ընթացակարգի Աղյուսակ 1-ում ներկայացված չափանիշների:

Վերապատրաստում չանցած, բայց ատեստավորման դիմում ներկայացրած դասախոսի դեպքում, հաշվարկվում են կիրառման մակարդակում արձանագրած առաջընթացի գնահատման արդյունքները՝ ըստ սույն ընթացակարգի Աղյուսակ 2-ում սահմանված սկզբունքների և հանձնաժողովի կողմից սահմանված այլ չափանիշների հաշվառմամբ:

7. Ըստ անհրաժեշտության հանձնաժողովի աշխատանքներում խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել ատեստավորվող դասախոսի ուսումնական

ստորաբաժաննան, ամբիոնի, կամ կրթական ծրագրի ներկայացուցիչը, ինչպես նաև մասնագիտական համայնքում հեղինակություն վայելող այլ փորձագետներ: Փորձագետի ներգրավման ձևաչափի վերաբերյալ հանձնաժողովը կայացնում է որոշում:

8. Վերապատրաստում անցած դասախոսների ատեստավորման և գնահատման արդյունքները ամփոփվում են երեք փուլով:

- Վերապատրաստման արդյունքում հավաքած միավորների ամփոփում՝ ըստ ԵՊՀ 2023-2026 թվականների դասախոսների վերապատրաստման կարգում սահմանված հաշվարկի մեթոդների:
- Ստացված գիտելիքների և հմտությունների կիրառման գնահատում, որի համար հիմք են հանդիսանում ԵՊՀ 2023-2026 թվականների դասախոսների վերապատրաստման կարգում սահմանած հաշվարկի սկզբունքները, ինչպես նաև սույն կարգով և ատեստավորման հանձնաժողովի կողմից սահմանված հաշվարկի հավելյալ սկզբունքները:
- Բանավոր հարցազրույցի փուլ:

9. Ատեստավորման արդյունքում հանձնաժողովը կայացնում է որոշում՝ նշելով դասախոսի միավորները: Որոշումն ուղարկվում է ԵՊՀ ռեկտորին, ֆինանսական վերլուծությունների վարչություն և անձնակազմի կառավարման բաժին՝ սահմանված կարգով դասախոսի աշխատավարձի չափը վերանայելու համար ու տվյալ դասախոսին:

### **3. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

10. Վերապատրաստում անցած, կամ չանցած դասախոսի դեպքում կիրառության բաղադրիչի հաշվարկը կատարվում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագրի իրականացման կարգում սահմանված բաղադրիչների գնահատման հիման վրա:

11. Աղյուսակ 1: Վերապատրաստում անցած դասախոսների ատեստավորումն իրականացվում է աղյուսակում նկարագրված չափանիշների համաձայն

	Ծրագրի բաղադրիչի անվանումը	Կիրառման միավորներ	Գնահատման ցուցիչ	Գնահատման աղբյուր
<b>1.</b>	<b>Գիտակարգային/մասնագիտական գիտելիքներ</b>	<b>3</b>		
1.1.	Միջգիտակարգային մասնագիտական հարթակներ	2	Ստացված գիտելիքի և հմտությունների կիրառությունը դասավանդման և հետազոտական աշխատանքի ընթացքում	<p>Ուղեկցող նամակ (առավելագույնը 5 էջ) և անհրաժեշտ հավելվածները, որում դասախոսը ներկայացնում է`</p> <ul style="list-style-type: none"> <li>Միջգիտակարգային կրթական, կամ հետազոտական ծրագրում ներգրավվածության մասին վկայող օրինակներ և փաստաթղթեր</li> <li>վերապատրաստման ծրագրի շրջանակներից դուրս միջազգային վերապատրաստման մասին վկայող օրինակներ և փաստաթղթեր</li> <li>մասնագիտական վերապատրաստման ընթացքում ստացված գիտելիքի և հմտությունների կիրառությունը դասավանդման և հետազոտական աշխատանքի ընթացքում` յուրաքանչյուր բաղադրիչի կիրառությունը մասնավորեցնող օրինակներով</li> <li>մասնագիտական վերապատրաստման կիրառություն</li> </ul>
1.2.	Արտասահմանյան հրավիրյալ մասնագետների կողմից անցկացված մասնագիտական սեմինարներ/դասընթացներ	1		
1.3.	Կարճաժամկետ մասնագիտական վերապատրաստում	1		
1.4.	Երկարաժամկետ մասնագիտական վերապատրաստում	2		
<b>2.</b>	<b>Դասավանդման կարողություններ/հմտություններ</b>	<b>4</b>		
2.1.	Դասավանդման/ուսուցման արդի մեթոդներ	2	Ստացված գիտելիքի և հմտությունների կիրառությունը դասավանդման ընթացքում	
2.2.	Արդյունահենք գնահատման մեթոդներ	1		

2.3.	Դասընթացի աշխատանքային ծրագրի արդիականացում և լրամշակում	2		ապացուցող օրինակներ (փոփոխված դասընթացի պլան, վերանայված հանձնարարովող գրականության ցանկ և այլն)
2.4.	Համակցված երկարաժամկետ դասընթաց. դասընթացի աշխատանքային ծրագրի արդիականացում և լրամշակում, գնահատում, դասավանդման մեթոդներ	3		<ul style="list-style-type: none"> <li>դասավանդման արդիական մեթոդների կիրառությունն ապացուցող օրինակներ և փաստաթղթեր (առաջադրանքի նկարագրություն, հանձնարարված առաջադրանքի շրջանակներում ուսանողների կատարած աշխատանքների օրինակներ, լսարանում իրականացրած ինտերակտիվ վարժության նկարագրություն)</li> </ul>
3.	<b>Գիտական և հետազոտական կարողություններ</b>	<b>3</b>		
3.1.	Հետազոտական մեթոդներ (ըստ մասնագիտությունների)	3	Ստացված գիտելիքի և հմտությունների կիրառությունը հետազոտական աշխատանքի իրականացման և կառավարման ընթացքում, ինչպես նաև դասավանդման ընթացքում հետազոտական աշխատանքի արդյունքների օգտագործումը	<ul style="list-style-type: none"> <li>Մ-ինդեքս-3 միավոր</li> </ul> <p>Հումանիտար և հասարակագիտական ուղղություններ-2 և բարձր, Scopus համակարգի տավյալներով</p> <p>Բնագիտամաթեմատիկական ուղղություններ- 4 և բարձր, Scopus համակարգի տավյալներով</p>
3.2.	Գիտական հոդվածների հրատարակություն			Վերջին 5 տարիների ընթացքում շահած հետազոտական դրամաշնորհների քանակը:
3.3.	Հետազոտական/գիտական հայտի մշակում			

3.4.	Գիտական/հետազոտական ծրագրի կառավարում			<p>Յուրաքանչյուր դրամաշնորհային ծրագիր գնահատվում է 1 միավոր: Գնահատման ընթացքում հանձնաժողովի կողմից դիտարկում են դասախոսի դերը դրամաշնորհային ծրագրում և ծրագրի ընդհանուր բյուջեն:</p> <p>Հետազոտական արդյունքների օգտագործումը դասավանդման գործընթացում՝ արդյունքների օգտագործումը դասավանդման ընթացքում՝ ուսանողների ներգրավումը հետազոտական գործընթացին, հետազոտական ընթացքի ներկայացումը լսարանում որպես դեպքի ուսումնասիրություն (case study) և այլն</p>
4.	<b>Ակադեմիական միջավայր</b>	<b>2</b>		
4.1.	Ակադեմիական բարեվարքություն	1	Ղասախոսի վարքագծի համապատասխանությունը ակադեմիական բարեվարքության և էթիկայի կանոններին	<ul style="list-style-type: none"> <li>• Ատեստավորմանը նախորդող երեք տարիների ուսանողների գնահատականի միջինը և միջինի շեղումը- առավելագույնը 1 միավոր</li> <li>• Կրթական ծրագրի, ամբիոնի վարիչի, ուսումնական ստորաբաժանման ղեկավարի կողմից տրվող բնութագիր- առավելագույնը 0.5 միավոր</li> <li>• Միջազգային կամ տեղական գործընկեր Բարձրագույն Ուսումնական հաստատության, կամ գիտնականի կողմից տրվող բնութագիր- առավելագույնը 0,5 միավոր: (Միջազգային, կամ</li> </ul>
4.2.	Ակադեմիական էթիկա	1		

				տեղական գործընկերոջ/կազմակերպության բնութագրի գնահատման դեպքում հաշվի է առնվում կազմակերպության վարկանիշը QS վարկանիշային աղյուսակում, կամ գործընկեր հետազոտողի հ-ինդեքսը)
--	--	--	--	--

13. Աղյուսակ 2: Վերապատրաստում չանցած դասախոսների ատեստավորումն իրականացվում է աղյուսակում նկարագրված չափանիշների համաձայն

	Ծրագրի բաղադրիչի անվանումը	Կիրառման միավորներ	Գնահատման աղբյուր և միավորների հաշվարկ
	Ընդհանուր գնահատում	5	<p><b><u>Ուղեկցող նամակ առավելագույնը 5 էջի սահմաններում (առավելագույնը 5 միավոր)</u></b></p> <p>Նամակի նպատակն է դասախոսի կողմից հետահայաց ինքնավերլուծության միջոցով ներկայացնել իր մասնագիտական զարգացման ընթացքը և ստացված գիտելիքի, կարողությունների և հմտությունների օգտագործումը մասնագիտական գործունեության մեջ:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Նկարագրել վերջին 5 տարիների ընթացքում առարկայի, կամ առարկաների դասավանդման բարելավմանն ուղղված քայլերն ու գործողությունները:</li> <li>• Անդրադառնալ տարբեր եղանակներով ստացված գիտելիքի ու հմտությունների կիրառմանը դասավանդման և հետազոտական աշխատանքի ընթացքում:</li> <li>• Հնարավորության դեպքում անդրադարձ կատարել դասավանդման բարելավման գործընթացում հետազոտական գործունեության արդյունքների ներառմանը:</li> <li>• Անդրադարձ կատարել դասընթացի շրջանակներում հանձնարարվող գրականության ցանկի վերանայման և արդիականացման սկզբունքներին, հաշվի առնելով ոլորտում իրականացվող հետազոտությունները և գիտակարգում առկա ժամանակակից միտումները:</li> <li>• Ներկայացնել թե ինչպե՞ս է դասավանդման ընթացքում խրախուսվում ուսանողների վերլուծական կարողությունների զարգացումը, ի՞նչ եղանակով է ապահովվում ուսանողի կողմից ստացված գիտելիքի կիրառության հնարավորությունը:</li> </ul>

			<ul style="list-style-type: none"> <li>• Ներկայացնել դասավանդման ընթացքում կիրառվող մեթոդները, ներկայացնել ի՞նչ նոր մեթոդներ են կիրառվել լսարանում և ինչո՞վ է պայմանավորված դրանց ընտրությունը:</li> <li>• Ներկայացնել ուսանողների գնահատման ընտրված սկզբունքներն ու չափանիշները և հիմնավորել դրանց արդյունավետությունը:</li> </ul>
1.	Գիտակարգային/մասնագիտական գիտելիքներ	6	<ul style="list-style-type: none"> <li>• Միջգիտակարգային կրթական, կամ հետազոտական ծրագրում ներգրավվածության մասին վկայող փաստաթղթեր-4</li> <li>• Վերապատրաստման ծրագրի շրջանակներից դուրս միջազգային վերապատրաստման մասին վկայող փաստաթղթեր-2</li> </ul>
2.	Դասավանդման կարողություններ/հմտություններ	7	<ul style="list-style-type: none"> <li>• Ինտերակտիվ, տեխնոլոգիապես հագեցած դասավանդման մեթոդների կիրառությունն ապացուցող փաստաթղթեր (առաջադրանքի նկարագրություն, հանձնարարված առաջադրանքի շրջանակներում ուսանողների կատարած աշխատանքների օրինակներ, լսարանում իրականացրած ինտերակտիվ վարժության նկարագրություն և այլն) -3</li> <li>• Դասալսման արդյունքում հանձնաժողովի կողմից պատվիրակված փորձագետի տրված գնահատականը - 2</li> <li>• Գնահատմանը նախորդող 2 տարվա ընթացքում E-learning հարթակում դասավանդողի գրանցած ակտիվությունը-2 միավոր <ul style="list-style-type: none"> <li>✓ պլանը տեղադրված է,</li> <li>✓ դասընթացին առնչվող նյութերը առկա են,</li> <li>✓ առաջադրանքները մշակված և տեղադրված են:</li> </ul> </li> </ul>
3.	Գիտական և հետազոտական կարողություններ	6	<ul style="list-style-type: none"> <li>• H-ինդեքս-2 միավոր</li> </ul>



3.1.	Հետազոտական մեթոդներ (ըստ մասնագիտությունների)		<p>Հումանիտար և հասարակագիտական ուղղություններ-3 և բարձր, Scopus համակարգի տավյալներով</p> <p>Բնագիտամաթեմատիկական ուղղություններ- 5 և բարձր, Scopus համակարգի տավյալներով</p>
3.2. 3.3. 3.4.	<p>Հետազոտական/գիտական հայտի մշակում</p> <p>Գիտական հոդվածների հրատարակություն</p> <p>Գիտական/հետազոտական ծրագրի կառավարում</p>		<ul style="list-style-type: none"> <li>Վերջին 5 տարիների ընթացքում շահած հետազոտական դրամաշնորհների քանակը: -2 միավոր</li> </ul> <p>Յուրաքանչյուր դրամաշնորհային ծրագիր գնահատվում է 1 միավոր: Գնահատման ընթացքում հանձնաժողովի կողմից դիտարկում են դասախոսի դերը դրամաշնորհային ծրագրում և ծրագրի ընդհանուր բյուջեն:</p>
3.5	Դասավանդման ընթացքում հետազոտական աշխատանքի արդյունքների օգտագործումը		<p>Հետազոտական արդյունքների օգտագործումը դասավանդման գործընթացում՝ արդյունքների օգտագործումը դասավանդման ընթացքում՝ ուսանողների ներգրավումը հետազոտական գործընթացին, հետազոտական ընթացքի ներկայացումը լսարանում որպես դեպքի ուսումնասիրություն (case study) և այլն-2 միավոր</p>

4.	Ակադեմիական միջավայր	4	<ul style="list-style-type: none"> <li>• Ատեստավորմանը նախորդող երեք տարիների ուսանողների միջին գնահատականը՝ 4,7 և միջինի շեղումը՝ 1- առավելագույնը 1,5 միավոր</li> <li>• Կրթական ծրագրի, ամբիոնի վարիչի, ուսումնական ստորաբաժանման ղեկավարի կողմից տրվող բնութագիր-առավելագույնը 1 միավոր</li> <li>• Միջազգային կամ տեղական գործընկեր Բարձրագույն Ուսումնական հաստատության, կամ գիտնականի կողմից տրվող բնութագիր- առավելագույնը 1,5 միավոր: (Միջազգային, կամ տեղական գործընկերոջ/կազմակերպության բնութագրի գնահատման դեպքում հաշվի է առնվում կազմակերպության վարկանիշը QS վարկանիշային աղյուսակում, կամ գործընկեր հետազոտողի հ-ինդեքսը)</li> </ul>
5.	Ընդհանրական հմտություններ	2	<ul style="list-style-type: none"> <li>• Միջազգային գիտաժողովներին ներկայացված զեկույցներ-առավելագույնը 0,5 միավոր</li> <li>• Օտար լեզվով դասավանդվող մասնագիտական առարկայի դասընթացի պլան- առավելագույնը 1 միավոր</li> <li>• Դասապրոցեսում օգտագործվող թվային գործիքներ-0,5</li> </ul>

#### 14. ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

15. Դասախոսը կարող է ատեստավորման արդյունքներով հանձնաժողովի կայացրած որոշումը բողոքարկել ռեկտորին, այն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

16. Ըստ անհրաժեշտության ռեկտորը հանձնաժողովից պահանջում է տվյալ դասախոսի գնահատման և ատեստավորման փաստաթղթերն ու այլ հիմնավորումներ:

Ատեստավորման գործընթացի ընթացակարգային խախտումների բացահայտման դեպքում ռեկտորն իրավասու է բեկանել հանձնաժողովի կայացրած որոշումը և նշանակել նոր քննարկում:

#### 17. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և գործում է մինչև 2026 թ. դեկտեմբերի 31-ը:

19. Սույն ընթացակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

20. Սույն ընթացակարգը հրապարակվում է ԵՊՀ կայքէջում:

21. ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնը ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում կազմակերպում է սույն ընթացակարգի դրույթների պատշաճ իրագրեկման աշխատանքները:

22. Սույն հրամանի նկատմամբ վերահսկողությունը վերապահել ԵՊՀ զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտոր Մ.Հովհաննիսյանին: